ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԳԻՏԱ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Լիպարիտ Սիմոնյանի, Լուսինե Սահակյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Նիկոլայ Բաղդասարյանի և Սիմոն Բաբայանի,

քննության առնելով Պալատի խորհրդին առընթեր Գիտա-վերլուծական կենտրոնի **(այսուհետ՝ Կենտրոն)** համակարգող նշանակելու մասին հարցը,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կենտրոնի համակարգող Գևորգ Գյոզալյանը հրաժարական է տվել, ինչպես նաև այն, որ Պալատի նախագահը որպես Կենտրոնի համակարգող առաջարկել է փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու Լյուդվիկ Դավթյանի (արտոնագիր թիվ 1416) թեկնածությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի 15-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի խորհրդի 30.04.2010թ. թիվ 10/8-Լ որոշմամբ հաստատված Կենտրոնի կանոնակարգի 8-րդ կետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Պալատի խորհրդին առընթեր Գիտա-վերլուծական կենտրոնի համակարգող նշանակել փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու Լյուդվիկ Դավթյանին (արտոնագիր թիվ 1416):***
2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Լյուդվիկ Դավթյանին:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

16 հոկտեմբերի 2014թ.
թիվ 28/8-Ա
ք.Երևան